



Կավի կախարդանքը

Բյուջե



Նպատակը

Ստեղծել լիովին կահավորված խեցեգործության, կերամիկայի և քանդակի արվեստանոց Վանաձորի Ստեփան Աղաջանյանի անվան գեղարվեստի դպրոցում՝ առաջին անգամ հնարավորություն ընձեռելով քաղաքի երեխաներին գործնական ուսուցում ստանալ հայկական ավանդական արհեստների ոլորտում:

Նկարագրություն

Ստեփան Աղաջանյանի անվան գեղարվեստի դպրոցը Վանաձորում գործող համայնքային, ոչ պետական կրթական հաստատություն է: Այսօր այստեղ սովորում է շուրջ 160 աշակերտ, որոնք ստանում են գեղարվեստական կրթություն, որն առանցքային դեր ունի քաղաքի ստեղծագործական կյանքի, մշակութային կրթության, ինչպես նաև երեխաների երևակայության և գեղագիտական մտածողության զարգացման գործում:

Չնայած այս ամուր հիմքին՝ ներկայումս Վանաձորում չկա որևէ վայր, որտեղ երեխաները կարող են ստանալ խեցեգործության, կերամիկայի կամ քանդակի մասնագիտական ուսուցում: Այս արհեստները, որոնք խորապես արմատավորված են հայկական կիրառական արվեստի ավանդույթներում, պարզապես հասանելի չեն համայնքի երիտասարդների համար:

Դպրոցը նախատեսում է ստեղծել հատուկ արվեստանոց՝ լրացնելու այս բացը: Աշակերտները հնարավորություն կունենան անցնելու ստեղծագործական ամբողջ գործընթացը՝ սկսած կավի նախապատրաստումից մինչև կավագործական անիվի վրա աշխատանքն ու պատրաստի աշխատանքների թրծումը վառարանում: Արվեստանոցը կհագեցվի մասնագիտական աշխատանքային սեղաններով և աթոռներով, կավի մշակման գործիքներով, պահարաններով, կավագործական անիվով և թրծման վառարաններով: Դասասենյակի անվտանգ և արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով կկատարվեն նաև անհրաժեշտ ենթակառուցվածքային աշխատանքներ, ներառյալ եռաֆազ էլեկտրամատակարարման և ջրամատակարարման անցկացումը:

FAR

Բյուջե

Ճախսի առարկա

ՄԻԱՎՈՐԻ ԱՐԺԵՔ

ԱՐԺԵՔ

Էլեկտրական վառարան Damagostar (1)	880,000	880,000
Օդափոխության համակարգ (վինտիլյատոր) վառարանի համար (1)	150,000	150,000
Վառարանի հրակայուն դարակներ (2)	52,000	104,000
Էլեկտրական բրուտագործական անիվ (1)	140,000	140,000
Աշխատանքային սեղաններ ջրակայուն մակերեսով (3)	45,000	135,000
Գլազուրի սեղան (1)	55,000	55,000
Պահարաններ փակ դռներով (4)	150,000	450,000
Պահարան բաց դարակներով աշխատանքների ցուցադրման համար (1)	115,000	115,000
Մետաղական դարակներ/ Ստիլյաժներ (3)	22,000	66,000
Լվացարանի պահարան (2)	30,000	60,000
Աթոռներ ջրակայուն մակերեսով (20)	17,000	340,000
Աթոռ սովորական (2)	17,900	35,800
Տումբաներ (10)	10,000	100,000
Մոդելավորման տախտակներ (լիստ) (2)	18,000	36,000
Պտտվող հարթակ / տուռնետկա իներցիոն (15)	20,000	300,000
Վառարանի հրակայուն ոտիկներ / մեծ ու փոքր (6)	2,000	12,000

Ընդհանուր

Փոխարժեք՝ 1 ԱՄՆ դոլար = 365 ՀՀ դրամ

₺ 2,978,800